

7049



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Տիգրան Գաբրիելյան



[Handwritten signature]
0204թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 094 - 24

Նախաձեռնող՝

«Ասկե Գրուպ» ԲԲԸ
Չարենցավան համայնք, Երևանյան 2

Գործունեությունը՝

Չարենցավան համայնքի Չարենցավան բնակավայրի արտադրական գոտի Երևանյան 2, Երևանյան 2/6, Գործարանային փողոց 1, Գործարանային փողոց 1/3 հասցեներում արևային ֆոտովոլտային կայանի կառուցում
Կոտայքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 094 - 24
«21» հունիսի 2024թ.


Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան բնակավայրի արտադրական գոտի Երևանյան 2, Երևանյան 2/6, Գործարանային փողոց 1, Գործարանային փողոց 1/3 հասցեներում արևային ֆոտովոլտային կայանի կառուցում

Նախաձեռնող՝	«Ասկե Գրուպ» ԲԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Բ»
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք

Ներածական մաս. «Ասկե Գրուպ» ԲԲԸ-ի /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից նախատեսվում է Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան բնակավայրի Արտադրական գոտի Երևանյան 2, Երևանյան 2/6, Գործարանային փողոց 1, Գործարանային փողոց 1/3 հասցեներում կառուցել արևային ֆոտովոլտային կայան:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /ՀՕ-150-Ն, այսուհետ՝ օրենք/ 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ ենթակետի՝ արևային կայանի կառուցումը՝ որպես նախատեսվող գործունեության տեսակ, դասակարգվում է Բ կատեգորիայի: Համաձայն օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի՝ մինչև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը շարունակում են գործել 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի համապատասխան դրույթները: Այսպիսով՝ փորձաքննական գործընթացն իրականացվել է 2014 թ. օրենքի դրույթներին համապատասխան:

Նկարագրական մաս. Գործունեությունն իրականացվելու է համաձայն՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թ. նոյեմբերի 15-ի N392-Ա որոշման, ընկերությանը՝ բացառապես սեփական կարիքների համար տրամադրված՝ 15000 կՎտ հզորությամբ ԼԷ №0752՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի (մինչև 2025թ. նոյեմբերի 15-ը գործողության ժամկետով), «ՀԷՏ» ՓԲԸ-ի կողմից 2024 թ. ապրիլի 25-ին տրամադրված տեխնիկական պայմանների (NS-110/0115-Հ), Չարենցավան համայնքի ղեկավարի կողմից 2024թ. փետրվարի 2-ին տրամադրված N09 ճարտարապետահատակագծային առաջադրանքի: Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ ընդհանուր 21.9 հա



մակերեսով հողամասերի նպատակային նշանակությունն արդյունաբերական, ընդերքագտազորման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների:

Նախագծի իրականացման նպատակն է՝ էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ բացառապես գործարանի պահանջները բավարարելու համար:

Համաձայն անշարժ գույքի վարձակալության 2023 թ. մայիսի 12-ի պայմանագրի՝ «ԱՐՄԱՎՏՈ» ԲԲԸ-ն իր տարածքից Գործարանային փողոց 1, և 1/3 հասցեներում գտնվող անշարժ գույքից 26308.8 քմ /2.63 հա/ մակերեսով շինություն և 5.7 հա տարածք վարձակալական հիմունքներով տրամադրել է Ընկերությանը: Արևային կայանը տեղակայվելու է ընկերության վարձակալության և սեփականության իրավունքով պատկանող տարածքներում: Վահանակների զբաղեցրած մակերեսը կազմում է 7.8 հա, որից տանիքի տարածքում՝ 2.9 հա, հողատարածքում՝ 4.9 հա:

Գործունեության տարածքին ամենամոտ բնակավայրերը գտնվում են 349 մ և 676.5 մ հեռավորությունների վրա, հանրապետական ավտոճանապարհը՝ 689.5 մ հեռավորության վրա, միջպետական ավտոճանապարհը՝ մոտ 2.5 կմ, տեղական ավտոճանապարհը՝ 1087.3 մ, Հրազդան գետը գտնվում է 4.1 կմ հեռավորության վրա:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները, կենդանիների միգրացիոն ուղիները, քանի որ տարածքը երկար տարիներ օգտագործվում է արդյունաբերական նպատակով:

Ռելիեֆի բացարձակ նիշերը տեղամասում տատանվում են ծովի մակարդակից՝ 1640.0 մ -1662.0 մ սահմաններում:

Կատարվել են գործունեության ենթակա տարածքի ուսումնասիրություններ: Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխանստվածքային ֆացիաներով: Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ նախատեսվող կառույցի վրա, բացակայում են:

Նախատեսվող գործունեության տարածքին բնորոշ է զով ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 24-25°C, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 72%, լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և ցուրտ ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -8,0°C է, հարաբերական խոնավությունը 81%, թույլ քամիները 2-3 մ/վրկ արագությամբ: Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,92 մետր:

Տեղամասի հաշվարկային սեյսմակայունությունն ըստ սպասվող առավելագույն արագացման գործակցի (g) արտահայտմամբ կկազմի 0.4g:

Համաձայն հայտի՝ նախատեսվում է 15000 կՎտ /15 ՄՎԱ/ հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 10/0.8 ԿՎ լարման տրանսֆորմատորային



ենթակայանների կառուցում և միացում «Քաղսի -1» 110 կՎ օդային գծից սնվող՝ գոյություն ունեցող 40000 կՎԱ հզորության ենթակայանին:

Արևակայանի առավելագույն դրվածքային հզորությունն ըստ վահանակների կազմում է 18000 կՎտ, իսկ արևակայանի առավելագույն հզորությունը կազմում է 15000 կՎտ: Ֆոտովոլտային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 26000 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 690 Վտ առավելագույն հզորությամբ: 50 հատ՝ 300 կՎտ ելքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի ելուստներից մալուխներով միանալու են ենթակայանների 0.8 կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին: Արևակայանի կառուցման համար ընտրվել են Trinasolar TSM-NEG21C.20 ֆիրմային արտադրության 22.2% ՕԳԳ-ով, IP 68 տիպի, 690 կՎտ առավելագույն հզորությամբ բազմաբյուրեղ ֆոտովոլտային մոդուլներ, մեկ մոդուլի չափսերը՝ 2384x1303x33 մմ: Փոխակերպիչները Huawei արտադրության են՝ 300 կՎտ ելքային հզորությամբ, ցանցային տեսակի, 6 MPPT (Maximal Power Point Tracker) 28 մուտքերով: Արևային էլեկտրակայանը տեղադրվելու է ցինկով գալվանապատված՝ մետաղական կոնստրուկցիաներով բետոնյա հիմքերի վրա՝ ամրացվելով հողին, իսկ ցինկով գալվանապատված կոնստրուկցիաները ամրացվելու են տանիքին: Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվելու են հորիզոնի նկատմամբ 24° թեքվածությամբ կոնստրուկցիայով: Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35 մ/վ քամու արագության համար (տարածքում քամու առավելագույն արագությունն ըստ շինարարական կլիմայաբանության նորմերի 24 մ/վ է):

Նախատեսվում է կառուցել 3 ենթակայան՝ 3 հատ 6600 կՎտ հզորության, 10/0.8-0.8 կՎ լարման տրասֆորմատորային լրակազմ՝ JUPITER- 6000K-H1 տիպի, որի մեջ նախատեսված է 0.8/0.4 կՎ լարման, 5 կՎԱ հզորության սեփական կարիքների չոր տրանսֆորմատոր: Հաշվառքն իրականացվելու է 110 կՎ ենթակայանքում:

Ենթակայանների ընդհանուր տարածքը՝ 300 մ² է, որից յուրաքանչյուրը զբաղեցնում է 100 մ² տարածք:

Ենթակայանի հողանցման արտաքին կոնտուրն իրականացվելու է 40x4 շերտապողպատով, որը տեղադրվելու է հողում 0.7 մ խորությամբ և ուղղահայաց էլեկտրողներով (անկյունակներ) 50x50x5 մմ՝ 2 մ երկարությամբ:

Բոլոր միացումներն իրականացվելու են եռակցումով, իսկ բոլոր մետաղական կոնստրուկցիաները միացվելու են հողանցման կոնտուրին:

Կայծակի ուղիղ հարվածներից ենթակայանի պաշտպանությունն իրականացվելու է CB-105 տիպի ե/բ հենասյուների վրա տեղադրված շանթարգելներով՝ ընդհանուր 13 մ բարձրությամբ:

Ենթակայանի լուսավորություն, տեսահսկման համակարգ, օպերատորական շինություն նախագծով չի նախատեսվում, քանի որ արտադրական տարածքն արդեն ապահովված է լուսավորության տեսահսկման և այլ համակարգերով:

Նախատեսվող գործունեության համար օդային գիծ, հենասյուներ, չեն նախատեսվում: Նախատեսվում է մալուխագծի մոնտաժում, ինչն իրականացվելու է ընկերության պատկանող տարածքում:



10կՎ ՄԳ-ի մալուխն ընտրվել է АПВПы 3x185 մմ² և 3x120 մմ² կտրվածքի: Հաշվառքն իրականացվելու է 110Կվ լարման ենթակայանում:

Մալուխն անցկացվելու է հողում, ավազե լցվածքով խրամուղու մեջ և պաշտպանվելու է ե/բ սալերով: Մալուխի անցկացման խորությունը 1 մ է, ընդհանուր երկարությունը՝ 801.136 մ, որը տեղադրվելու է օձաձև՝ ջերմային դեֆորմացիաներից խուսափելու համար:

Գործունեության տարածքում նախատեսվում են կրակմարիչների և հրդեհաշիջման վահանակի տեղադրում:

Ընկերության տարածքում առկա է ազատ պահեստային շինություն, որն օգտագործվելու է խոտանված մասերի և գործածությունից դուրս եկած վահանակների ժամանակավոր պահման համար:

Տարածքում հողային աշխատանքների ծավալները քիչ են, տարածքը հիմնականում հարթ է: Կայանի և ենթակայանների կառուցման ժամանակ կատարվելու են՝ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի համար նախատեսված հորատանցքերի և դեպի ենթակայաններ տանող ստորգետնյա մալուխագծի անցկացման նպատակով խրամուղիների փորման, ենթակայանում տրանսֆորմատորի տեղադրման և յուղընդունիչ հորի կառուցման հողային աշխատանքներ: Հանվող հողային զանգվածի ընդհանուր քանակը՝ 2.140 մ³, որից բուսահող՝ 140 մ³, հետլիցք՝ 1712 մ³: Բուսահողն օգտագործվելու է վերին շերտում, տարածքի բարեկարգման համար, իսկ գրունտի զանգվածի՝ մոտավորապես 428 մ³ ծավալով ավազն օգտագործվելու է որպես բարձիկ մալուխների համար:

Շինարարական աշխատանքների տևողությունը կազմում է 2 տարի:

Շինարարական աշխատանքներին ներգրավվելու են 35 մարդ՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով, ովքեր հիմնականում լինելու են համայնքի բնակիչներ:

Որպես շինիրապարակ ծառայելու է Ընկերության գործարանի տարածքը, որն ամբողջովին ապահովված է բոլոր ենթակառուցվածքներով: Տարածքում առկա է խմելու, տեխնիկական ջուր, սանհանգույց՝ ընդհանուր անձնակազմի կարիքները բավարարելու համար:

Արևակայանի և ենթակայանի կառուցման համար օգտագործվելու է բետոնանյութ, որը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտացված կազմակերպություններից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ շինաղբի և կենցաղային աղբի, օգտագործվող նյութերի մնացորդների, յուղոտված լաթերի տեսքով: Առաջանալու են մալուխների, հաղորդալարերի մնացորդներ՝ (սև մետաղ 10 կգ, ալյումին՝ 6 կգ և պղինձ՝ 8 կգ), յուղոտված լաթեր՝ 2 կգ/տարի, շինարարական նյութերի մնացորդներ, քանդման ընթացքում առաջացած շինարարական աղբ՝ 25 մ³, փորման արդյունքում հանված խոշոր քարաբեկորներով վտանգավոր թափոններով չաղտոտված հողային զանգված՝ 135 մ³ ծավալով, կենցաղային աղբ՝ 2400 կգ/տարի քանակով:

Արևային կայանի շահագործման ընթացքում հնարավոր վթարների կամ ենթակայանի հնարավոր վերանորոգման ժամանակ առաջանալու են վտանգավոր թափոններ՝ հալոգեններ, դեֆլիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր (10տ/տարի քանակով), ինչպես նաև յուղոտված լաթեր, ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդներ, յուղերով աղտոտված ավազ, սև մետաղի ջարդոն, որոնց քանակները ևս



ներառված են հայտում: Վտանգավոր նյութերը և մետաղական թափոնները տրամադրվելու են համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար:

Հայտում նախատեսվել են թափոնների ազդեցության մեղմմանն ուղղված միջոցառումներ, որոնց ճիշտ կառավարման արդյունքում վերջիններիս ազդեցությունները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույն:

Համաձայն հայտի՝ շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են՝ օդային ավազանի, հողային, ջրային ռեսուրսների, արտակարգ իրավիճակների, աղմուկի մակարդակի, ինչպես նաև թափոնների կառավարման, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ կապված հնարավոր ազդեցությունների մեղմմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնց ճիշտ կիրառման արդյունքում՝ գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

Մասնավորապես՝ հայտի միջոցառումների ծրագրով և մոնիթորինգի պլանով նախատեսվում են՝

- օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարել գրունտի խոնավացում և ճանապարհների ջրցան՝ ջրցան մեքենայով, չոր և շոգ եղանակներին,
- ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների վրա ցման համար օգտագործել գործարանում առկա տեխնիկական որակի ջուրը,
- պարզարանում առաջացած նստվածքը տեղափոխել աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,
- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավացումը կատարել այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,
- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով,
- տարածքում նույնիսկ պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,
- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ,
- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների վրա՝ հողային ռեսուրսները չաղտոտելու նպատակով,
- շինարարական տեխնիկայի և սարքավորումների լիցքավորումը, վերանորոգումը կատարվելու է գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում,
- գործունեության իրականացման ընթացքում կենսաբազմազանության պահպանությանն ուղղված միջոցառումներ չեն նախատեսվում, քանի որ գործունեության ենթակա տարածքում կենսաբազմազանությունը բացակայում է,
- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ

կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ խառնվելու և տեղափոխվելու են աղբավայր,

- հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու են համապատասխան տարաների մեջ և հանձնվելու են մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,
- աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,
- արևակայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված պանելներ, որոնք կուտակվելու են տարածքում առկա ազատ պահեստային շինությունում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը,
- շինարարության ընթացքում պահպանվելու են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և այլն:

Արևային կայանի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, մաքրվելու են պանելների մակերևույթները:

Համաձայն հայտի՝ Ընկերության կողմից գործունեության հնարավոր դադարեցման դեպքում՝ նախատեսվում է վերջինիս կողմից կայանի սարքավորումների ապամոնտաժում և տարածքի նախկին տեսքի բերում:

Պատճառաբանական եզրահանգումներ. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման շրջանակներում իրականացվել են արևային կայանի կառուցման և շահագործման ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություններ, որի հիման վրա գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան արևային կայանի շինարարության և շահագործման ընթացքում: Մշակվել են այդ ազդեցությունները կանխարգելող կամ մեղմող միջոցառումներ, ինչպես նաև այդ միջոցառումների արդյունավետության վերահսկման և մոնիթորինգի ծրագիր:

Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը զգալի չէ և կրում է ժամանակավոր բնույթ:

Այսպիսով, իրականացվող աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Արևային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի փորձաքննության գործընթացն իրականացվել է օրենքի պահանջներին համապատասխան:

Հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, Չարենցավանի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել են հայտի լրամշակումներ և հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:



Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների /հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն և այլն/ մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը:
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական, հրդեհանվտանգության և սանիտարական նորմերի պահպանմանը:
- Գործունեության արդյունքում առաջացող վտանգավոր թափոնների (հալոգեններ, դեֆլիդիներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր, ինչպես նաև յուղոտված լաթեր, ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդներ, յուղերով աղտոտված ավազ, սև մետաղի ջարդոն և այլն), հեռացումը, տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Ասկե Գրուպ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան բնակավայրի Արտադրական գոտի, Երևանյան 2, Երևանյան 2/6, Գործարանային փողոց 1, Գործարանային փողոց 1/3 հասցեներում արևային ֆոտովոլտային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝

Ներիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Արմինե Վարդանյան

